ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԻԱՆՆԱ ԱՎԱԳՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր **Ս.Ա.Մարության**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Թ.Ասատրյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ.Մ.Պողոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Ծիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. մայիսի 31-ին ժամը 12:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. ապրիլի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Ա.Հ.Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Անձնավորության բարոյահոգեբանական առողջության ցուցանիշների զգալի նվազումն, այսօր, պայմանավորված է նախադպրոցական տարիքից սկսած սոցիալականացման բնական միջավայրերի՝ ընտանիքի և հասակակիցների սոցիալական խմբի, խարխլմամբ, երեխաների դաստիարակության անհատականացված ձևերի գերակայությամբ: Վերջին տարիների մանկավարժական փորձը ցույց է տալիս, որ մերօրյա նախադպրոցական տարիքի երեխաների գերակշռող մասը դժվարանում է ընկերանալ, փոխհարաբերություններ հաստատել հասակակիցների հետ, նրանք չեն կարողանում համաձայնության գալ՝ համադրելով իրենց գործողություններն ու մտքերը, պատրաստ չեն համագործակցության: Ավագ նախադպրոցականները, հաճախ, չունեն հասակակիցների հետ հաղորդակցվելու ցանկություն, բացակայում են համատեղ գործունեության տարիքին բնորոշ նշանակալի դրդապատճառները:

Հայտնի է, որ հասակակիցների միջավայրում՝ նրանց հետ շփման ընթացքում են զարգանում միջանձնային ընկալման այն մեխանիզմները, որոնք աստիճանաբար նպաստում են սոցիալական զգացմունքների և անձնային կարևորագույն հատկությունների ձեռքբերմանը: Յ. Լ. Կոլոմինսկին նշում է, որ նախադպրոցական տարիքում երեխան չափազանց զգայուն է արտաքին աշխարհի, այդ թվում և մարդկանց հանդեպ դրական դիրքորոշման, բարի վերաբերմունքի ձեռքբերման նկատմամբ: Եվ եթե սոցիալականացման սկզբնական փուլերում լիարժեք չեն բավարարվում սոցիալական բնույթի պահանջմունքները, մասնավորապես, հաղորդակցվելու պահանջմունքը, ապա ոչ միայն վտանգվում է արգիտիվ կողմնորոշման ձևավորումը, այլև հետագայում հավանական են դառնում տարաբնույթ ներանձնային և միջանձնային կոնֆլիկտները:

Նախադպրոցական մանկավարժության արդի խնդիրներից է երեխայի սոցիալ-անձնային զարգացման խթանումը հասակակիցների հետ ակտիվ փոխգործունեության միջոցով: Փոխներգործության, համագործակցության փորձը, լինելով նախադպրոցականի սոցիալականացման բնական միջոց, միաժամանակ նպաստում է ինքնաճանաչմանը և օբյեկտիվ ինքնագնահատմանը:

Նախադպրոցական տարիքում հասակակիցների հետ հաղորդակցվելու և համատեղ գործունեություն ծավալելու, դրական փոխհարաբերություններ հաստատելու հիմնախնդիրներին իրենց աշխատություններում անդրադարձել են մի շարք անվանի հոգեբաններ և մանկավարժներ (Տ. Ն. Ռեպինա, Ա. Վ. Պետրովսկի, Մ. Ի. Լիսինա, Վ. Ն. Մուխինա, Գ. Ա. Ցուկերման, Ս. Ա. Կոզլովա, Ե. Օ. Սմիրնովա, Ծ.Ա.Ամոնաշվիլի,Զ. Մ. Բոգուսլավսկայա, Լ. Ն. Գալիգուզովա, Ա. Գ. Ռուզսկայա, Դ. Վ. Ջոնսոն, Ռ. Տ. Ջոնսոն, Ն. Հակոբյան; Ս. Գևորգյան Ա. Հովհաննիսյան; Ա.Դավթյան): Նրանք նշված

գործընթացներում առավել կարևորել են սոցիալական պահանջմունքների բավարարման առաջնահերթությունը, մասնավորապես՝ հաղորդակցման, սիրո և ճանաչման, նոր տպավորությունների և ինքնարտահայտման: Նախադպրոցականի դաստիարակության գործող համակարգում առավելապես օգտագործվում են դաստիարակի և երեխաների համագործակցության ձևեր, որոնք, իրենց հզոր մանկավարժական նշանակությամբ հանդերձ, չեն կարող լրացնել հասակակիցների հետ հաղորդակցման և համագործակցության անհրաժեշտությունը: Երեխայի՝ հասակակիցների հետ փոխգործելու, իր հետաքրքրությունները նրանց հետ իրականացնելու ցանկությունը՝ ինքնադրսևորման և ինքնագնահատման, սոցիալական ինքնահաստատման ձգտում է:

Նախադպրոցականի զարգացման պրակտիկայում, այսօր, առկա են հակասություններ, որոնք խոչընդոտում են երեխայի սոցիալականացման բնականոն ընթացքը և լրացուցիչ դժվարություններ ստեղծում հասակակիցների հետ հաղորդակցվելիս: Մասնավորապես.

- հասակակիցների միջավայրում սոցիալականացման, ինքնուրույն սոցիալական փորձ ձեռքբերելու ռազմավարական կարևորության և նախադպրոցականների դաստիարակության գործընթացը դաստիարակի անմիջական մասնակցությամբ կազմակերպելու միջև;
- միջանձնային ընկալման մեխանիզմների զարգացման, անձնային փոխհարաբերությունների կառուցման անհրաժշտության և այդ ուղղությամբ տարվող ոչ համարժեք մանկավարժական աշխատանքի միջև;
- սոցիալապես ինքնավստահ նախադպրոցական ձևավորելու հասարակական պահանջի և համագործակցային վարքագիծը խթանող ոչ բավարար մանկավարժական պայմանների միջև:

Նշված հակասությունների հաղթահարման, նախադպրոցականի անձի՝ հասակակիցների միջավայրում զարգացման հիմնահարցի հրատապ լուծման անհրաժեշտությունից է բխում ատենախոսության թեմայի ընտրությունն ու հիմնախնդրի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է բացահայտել նախադպրոցականի համագործակցային կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները՝ միտված կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության օբյեկտը՝ նախադպրոցական տարիքի երեխաների համագործակցային կարողությունների ձևավորման գործընթացն է:

Հետազոտության առարկան՝ ավագ նախադպրոցականների համատեղ գործունեության դրդապատճառների ձևավորման մանկավարժական պայմաններն են:

Հետազոտության գիտական վարկածը: Ենթադրվում է, որ նախադպրոցական տարիքի երեխաների համագործակցային

կարողությունների ձևավորման գործընթացը կլինի արդյունավետ, եթե՝

- մշակվեն առաջադրանքներ, ուղղված երեխաների ցանկությունների, պահանջմունքների բացահայտմանը;
- երեխաների համատեղ գործունեության ընթացքում ապահովվեն համագործակցության զգացողություն և համագործակցելու ցանկություն առաջացնող մանկավարժական պայմաններ;
- համագործակցելու ձգտումը գործնականում իրացվի համատեղ գործունեության տարբեր ձևերում՝ խաղային, կերպարվեստային, աշխատանքային;
- ստեղծվեն ավագ նախադպրոցականների համագործակցային դրդապատճառների ձևավորման պայմաններ:

Հետազոտության նպատակից և գիտական վարկածից օրինաչափորեն առանձնացվել են հետևյալ **խնդիրները.**

1. վերլուծել նախադպրոցական տարիքի երեխաների համագործակցային կարողությունների ձևավորման գիտատեսական և գիտամեթոդական հիմքերը;
2. ուսումնասիրել և հայտորոշել նախադպրոցական տարիքի երեխաների համագործակցային կարողությունների ձևավորման մակարդակը մանկապարտեզի տարիքային տարբեր խմբերում;
3. հետազոտության միջոցով որոշարկել ավագ նախադպրոցականների համագործակցության ձևերն ու դրանց դրդապատճառները;
4. մշակել և փորձարարական հետազոտությամբ հիմնավորել նախադպրոցական տարիքի երեխաների համագործակցային կարողությունների ձևավորմանն ուղղված մանկավարժական պայմանների համալիր;
5. փորձարարական հետազոտությամբ ստուգել առաջարկվող մանկավարժական պայմանների արդյունավետությունը:

Աշխատանքի համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել. երեխայի սոցիալականացման և հարմարման գործոններն ու միջոցները սահմանող գիտական հայեցակարգերը (Ս.Ի. Գեսսեն, Բ.Գ. Անանև, Ի.Ս. Կոն, Ա.Վ. Մուդրիկ, Վ.Ս. Մուխինա, Ա.Վ. Պետրովսկի, Դ.Ի. Ֆելդշտեյն), այն գիտական գաղափարները, որոնք հոգեկան առողջության և անձի զարգացման հիմքում տեսնում են նախադպրոցական տարիքի երեխաների հաղորդակցման մարդասիրական ուղղվածությունը (Ա.Ա. Բոդալև, Ա.Վ. Զապորոժեց, Մ.Ի. Լիսինա), նախադպրոցականի հոգեկան և սոցիալ-անձնային զարգացման օրինաչափությունները (Բ.Գ. Անանև, Լ.Ի. Բոժովիչ, Լ.Ս. Վիգոտսկի, Ս.Ա. Կոզլովա, Ա.Ն. Լեոնտև, Ս.Լ. Ռուբինշտեյն, Դ.Ի. Ֆելդշտեյն, Դ.Բ. Էլկոնին), երեխայի ինքնագիտակցության, ինքնահաստատման, սոցիալական ակտիվության և մտահասության դրսևորումները հիմնավորող տեսական դրույթները (Բ.Գ. Անանև, Ա.Գ. Ասմոլով, Վ.Ս. Մուխինա, Վ.Ա. Պետրովսկի, Ն.Կ. Պոլիվանովա, Գ.Ա. Ցուկերման),

ինչպես և նախադպրոցական կրթության հայեցակարգային մոտեցումները և անձի կարողությունների ձևավորման վերաբերյալ տեսությունները:

Գիտական վարկածի փորձարկման և հետազոտության խնդիրների իրականացման նպատակով օգտագործվել են հետևյալ **մեթոդները**.

- հոգեբանամանկավարժական գիտական գրականության վերլուծություն, մանկավարժական փորձի ընդհանրացում;
- դիտում, զրույց, խաղ;
- փորձարարական հետազոտություն, խնդրահարույց առաջադրանքներ;
- մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Վերլուծվել և բնութագրվել են ավագ նախադպրոցականների համագործակցության դժվարությունների պատճառները (գործառնական, դրդապատճառային):

2. Մշակվել և գիտափորձով հիմնավորվել են ավագ նախադպրոցականների համագործակցային կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները (երեխաների համախմբում համատեղ գործունեության միջոցով, զարգացնող առարկայական միջավայրի ապահովում, նպատակային պարապմունքների, խաղերի կազմակերպում):

Հետազոտության տեսական նշանակությունը:

1. Հասակակիցների հետ հաղորդակցման և համագործակցության գործառույթների բացահայտմամբ ընդլայնվել են նախադպրոցականի անձի ձևավորման տեսական պատկերացումները:

2. Հոգեբանական վերլուծության են ենթարկվել այսօրվա ավագ նախադպրոցականների համագործակցության դժվարությունների պատճառները, մշակվել են դրանց հաղթահարման մանկավարժական պայմանները:

Հետազոտության գործնական նշանակությունը:

Նախադպրոցականների համագործակցային կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանների համալիրը կարող է հաջողությամբ կիրառվել մանկապարտեզի մանկավարժական գործընթացում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները:

1. Նախադպրոցականների համագործակցային կարողությունները՝ նրանց սոցիալական մտահասության, սոցիալ-անձնային զարգացման ցուցանիշներ են, դրական միջանձնային հարաբերությունների կառուցման երաշխիք:

2. Նախադպրոցականների համագործակցային կարողությունների ձևավորման մանկավարժական պայմաններն ենթադրում են.

- սեփական ցանկությունների, պահանջմունքների բացահայտում՝ խաղային ուսուցման ընթացքում խմբային առաջադրանքների միջոցով,
- հասակակիցների հետ համագործակցության դրդապատճառների առաջացում, համագործակցության զարգացման աստիճանականություն:

3. Նախադպրոցականների համագործակցային կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները ներառում են.

- խմբային առաջադրանքներ՝ ուղղված երեխաների ցանկությունների, պահանջմունքների բացահայտմանը;
- համագործակցելու ցանկության խթանում, համագործակցության զգացողության ձևավորում նպատակային պարապմունքների ընթացքում;
- համագործակցակցային կարողությունների գործնական կիրառում համատեղ գործունեության տարբեր ձևերում՝ խաղային, կերպարվեստային, աշխատանքային:

4. Նախադպրոցականի համագործակցային կարողությունները ձևավորվում են աստիճանաբար, դրսևորվում են մյուս երեխաների հետ փոխգործունեության ձգտումով, սեփական ցանկությունները նրանց հետ իրականացնելու և հանուն ընկերների սեփական պահանջմունքներից հրաժարվելու պատրաստակամությամբ:

Հետազոտության փորձաքննությունը: Հետազոտության արդյունքները բազմիցս քննարկվել են նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստերի և տեսական սեմինարների ընթացքում, հանրապետական և միջազգային գիտամեթոդական կոնֆերանսներին և գիտաժողովներին:

Հետազոտության նյութերը ներկայացված են հոդվածներում և մեթոդական ձեռնարկում:

Հետազոտության արդյունքները փորձարկվել և ներդրվել են ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թիվ 5, Արաբկիր վարչական շրջանի թիվ 33 և Ծենգավիթ վարչական շրջանի թիվ 126 մանկապարտեզներում: Փորձարարական հետազոտությունում ընդգրկվել են նշված մանկապարտեզների կրտսեր, միջին և ավագ խմբերի նախադպրոցականները, շուրջ 120 երեխա:

Հետազոտության արդյունքների հիմնավորվածությունն ու հավաստիությունն ապահովվել է գիտական մեթոդաբանության ընտրությամբ, նախադպրոցական կրթության ժամանակակից մոտեցումների կիրառմամբ, փորձարարության արդյունքների մաթեմատիկական վերլուծությամբ:

Փորձարարական հետազոտությունը իրականացվել է երեք փուլով 2009-2012 թթ. ընթացքում:

Առաջին փուլ / 2009-2010թթ./: Մանրամասն ուսումնասիրվել և վերլուծվել է թեմայի վերաբերյալ գիտական գրականությունը,

ատենախոսության հիմնախնդրի ժամանակակից դրվածքը: Առանձնացվել են նախադպրոցականների համագործակցային կարողությունների ձևավորման տեսական դրույթներն ու նշված գործընթացի կազմակերպման մեթոդական հանձնարարականները: Արձանագրվել են հետազոտվող երեխաների համագործակցության ձևերը դաստիարակների և հասակակիցների հետ, համագործակցային կարողությունների դրսևորման առանձնահատկությունները: Գնահատվել է կրտսեր, միջին և ավագ նախադպրոցականների համագործակցային կարողությունների դրսևորման աստիճանը:

Երկրորդ փուլ /2010-2011թթ./: Մշակվել է նախադպրոցականների համագործակցային կարողությունների ձևավորմանն ուղղված մանկավարժական աշխատանքի տրամաբանությունը, առանձնացվել են նշված գործընթացի կազմակերպման առանցքային կողմերը, ընտրվել են խաղային ուսուցման ձևերը, նպատակային պարապմունքների թեմատիկան: Իրականացվել է փորձարարական հետազոտության արձանագրող փուլը:

Երրորդ փուլ /2011-2012թթ./: Կազմակերպվել և անցկացվել է փորձարարական հետազոտության հիմնական մասը, ստուգվել է գիտական ենթադրության հավաստիությունը, ընդհանրացվել և համակարգվել են փորձարարական հետազոտության ձևավորող և ստուգիչ փուլերի արդյունքները: Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա ձևակերպվել են եզրակացություններ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից՝ տեսական և փորձարարական, եզրակացություններից, մեթոդական հանձնարարականներից, 142 անուն գրականության ցանկից:

Ատենախոսության ընդհանուր ծավալը համակարգչային շարվածքով կազմում է 141 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, նպատակից բխող հետազոտական խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, փորձաքննությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին՝ **«Նախադպրոցականի համագործակցային կարողությունների ձևավորման տեսական-մեթոդաբանական հիմքերը»** խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին՝ «Նախադպրոցականի համագործակցային կարողությունների ձևավորման վերաբերյալ հոգեբանամանկավարժական մոտեցումների վերլուծությունը» ենթաբաժնում լուսաբանված են հիմնախնդրի շուրջ առկա հոգեբանամանկավարժական մոտեցումները, մանրակրկիտ քննարկված են այն հետազոտությունների արդյունքները, որոնք վերաբերում են նախադպրոցականների համագործակցային գործունեության խթանմանը, վերլուծված են նախադպրոցականների համագործակցային կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները:

Երեխաների համագործակցությունը՝ մեծահասակի կողմից կազմակերպվող և վերահսկվող համատեղ գործողությունների ձև է՝ ուղղված համատեղ գործունեության արդյունքի արձանագրմանը /Մ. Ի. Լիսինա և Ե. Օ. Սմիրնովա/: Ըստ Վ. Ս. Մուխինայի՝ հասակակիցների հետհաղորդակցման գործընթացը՝ սոցիալական հարաբերությունների կոշտ և դժվար դպրոց է, որտեղ և ձևավորվում են համագործակցելու կարողությունները: Զ.Մ. Բոգուսլավսկայան, Լ.Ն. Գալիգուզովան, Ա.Գ. Ռուզսկայան նշում են, որ հասակակիցների հետ հաղորդակցման ընթացքում երեխան, համեմատելով իրեն տարեկցի հետ, ձգտում է ճանաչել և գնահատել սեփական ձեռքբերումներն ու անհաջողությունները: Լ. Ն. Գալիգուզովայի տվյալների համաձայն, հասակակցի հետ շփվելու ցանկությունը նկատվում է արդեն կյանքի երրորդ տարում: Երեխան փորձում է ներկայանալ հասակակցին՝ ցուցադրում է իր կարողությունները, դրսևորում է ընդգծված հուզականություն, չի թաքցնում իր բարյացակամ վերաբերմունքը: Հասակակցի հետ հաղորդակցվելու, փոխգործելու պահանջմունքը ուժգնանում է միջին և ավագ նախադպրոցական տարիքում: Երեխաների փոխգործունեության և հասակակիցների հետ համագործակցության ընթացքում է նախադպրոցականը ձեռքբերում այն կարևորագույն սոցիալական փորձը, որը նրան օգնում է հետագայում ազատ կողմնորոշվելու և ինքնահաստատվելու նոր սոցիալական միջավայրում:

Երկրորդ՝ «Նախադպրոցական տարիքի երեխաների համագործակցային կարողությունների ձևավորման առանձնահատկությունները և դրանց վրա ազդող գործոնները» խորագրով ենթագլխում ներկայացված են համագործակցային կարողությունների ձևավորման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքի բոլոր շրջափուլերում, մանրամասն քննարկված են նշված մանկավարժական գործընթացին ներազդող գործոնները, վերլուծված են նախադպրոցականների հաղորդակցման և համագործակցության դրդապատճառները, դրանց սոցիալական ուղղվածությունը: Ներկայացված են նաև նախադպրոցականների հաղորդակցման և համագործակցության դժվարությունները՝ պատճառների հիմնավորմամբ:

Ե.Օ.Սմիրնովայի և Ռ.Կ. Տերեշչուկի ուսումնասիրությունների արդյունքները խոսում են այն մասին, որ երեք տարեկանից սկսած մինչև դպրոցական տարիքը երեխային հասակակիցների հետ համագործակցության դրդող գլխավոր պահանջմունքը՝ բարի զգացողությունների փոխանակումն է, իսկ դրդապատճառը՝ հասակակիցների դրական գնահատականն ու բարյացակամ վերաբերմունքը: Միջին նախադպրոցական տարիքում աստիճանաբար ի հայտ է գալիս և հիմնական է դառնում համագործակցելու պահանջմունքը: Համագործակցության պահանջմունքին հաջորդում է համատեղ գործունեության ընթացքում ստեղծագործելու, համատեղ ստեղծագործական գործունեությամբ զբաղվելու պահանջմունքը: Ավագ նախադպրոցական տարիքում սկսում են դրսևորվել հաղորդակցման իմացական դրդապատճառները, որոնք միաձուլվում են անձնային դրդապատճառների հետ և ամբողջացնում համագործակցության ընթացքը:

Հասակակիցների հետ հաղորդակցման միջոցները, բնականաբար, պայմանավորված են համատեղ գործունեության պահանջմունքներով և դրդապատճառներով: Կրտսեր նախադպրոցականներին բնորոշ են, հիմնականում, արտահայտիչ հուզական գործողությունները: Երեք տարեկանից սկսած առաջատար են դառնում խոսքային միջոցները:

Համագործակցային կարողությունների ձևավորման գործում առանձնահատուկ կարևորվում է հաղորդակցման ընթացքում ձևավորվող վերաբերմունքը հասակակցի նկատմամբ: Գործընկերոջը ճանաչելու և ըստ այդմ համագործակցելու կարողությունը հետագայում առողջ միջանձնային հարաբերություններ կառուցելու գրավականն է, ինքնագնահատման օբյեկտիվության հիմնական միջոցը: Ավագ նախադպրոցական տարիքում նկատվում են հասակակցի հանդեպ դրական տրամադրվածության դրսևորումներ, որոնք արտաքին ամրագրման և պահպանման կարիք ունեն: Համագործակցային կարողությունների ձևավորման արդյունավետությունը պայմանավորված է հասակակիցների հետ հաղորդակցման դրդապատճառների առկայությամբ, որոնց համալիր դրսևորումն առաջացնում է համագործակցության զգացողություն և ապահովում համագործակցության հաջողությունը: Կ. Մ. Գուրեվիչի, Ն. Մ. Մատյուշինայի հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ հասակակիցների գործունեության դրդապատճառների համադրման կարողության և երեխայի ներքին կոնֆլիկտների հաղթահարման միջև գոյություն ունի ուղղիղ համեմատական կապ:

Ռ.Բ. Ստերկինայի հետազոտությունները բացահայտում են նախադպրոցականի հաղորդակցման դրդապատճառների կապը նրա հավակնությունների մակարդակի հետ:

Երրորդ՝ «Նախադպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորման առանձնահատկություններն ու դժվարությունները, դրանց հաղթահարման մանկավարժական

ուղիները» խորագրով ենթագլխում ներկայացված են նախադպրոցականների համագործակցային կարողությունների և միջանձային հարաբերությունների ձևավորման գործընթացների փոխկապակցվածությունը, նշված գործընթացների կազմակերպման առանձնահատկությունները, մեթոդական հանձնարարականները: Վերլուծված են նաև միջանձային հարաբերությունների ձևավորման դժվարությունները, կոնֆլիկտային փոխհարաբերությունների կանխարգելման և հաղթահարման մանկավարժական ուղիները:

Նախադպրոցականի համագործակցային կարողությունների և միջանձային հարաբերությունների ձևավորման մանկավարժական պայմաններն առանձնացվել են հետևյալ տեսական դրույթներից.

- համագործակցային կարողություններն ու միջանձային հարաբերությունները ձևավորվում են միջնորդված գործունեության ընթացքում /Ա. Վ. Պետրովսկի/;
- երեխաների փոխհարաբերությունները դիտարկվում են որպես հաղորդակցման և համատեղ գործունեության արդյունք /Մ. Ի. Լիսինա/;
- երեխաների փոխհարաբերությունների հիմքում ընկած է համատեղ գործունեության մասնակիցների ճանաչումն ու գնահատումը /Ե. Օ. Սմիրնովա, Վ. Մ. Խոլմոգորովա/:

Ատենախոսության երկրորդ՝ «Նախադպրոցականի համագործակցային կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները» գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին «Համատեղ գործունեությունը որպես նախադպրոցականի համագործակցային կարողությունների ձևավորման միջոց» ենթագլխում ներկայացված են համատեղ գործունեության ընթացքում նախադպրոցականների համագործակցային կարողությունների ձևավորման միջոցները, մանկավարժական պայմանները, մանրամասն նկարագրված են փորձարարական հետազոտությունին մասնակցող երեխաների համագործակցային կարողությունների ուսումնասիրության արդյունքները և նախնական մանկավարժական աշխատանքի բովանդակությունն ու մեթոդիկաները:

Նախադպրոցական տարիքի երեխաների համագործակցային կարողությունների ձևավորմանը նպաստում են հետևյալ մանկավարժական պայմանները.

- զարգացնող առարկայական միջավայրի ապահովումը;
- երեխայի ճանաչողական հետաքրքրությունների ընդլայնմանն ուղղված պարապմունքներն ու խաղերը;
- յուրաքանչյուր երեխայի համար հուզական հարմարավետության ապահովումը;
- երեխաների աստիճանական համախմբումը համատեղ գործունեության մեջ;

- համատեղ գործունեության արդյունքին հասնելու համար յուրաքանչյուր երեխայի մեջ իր անձը կարևորելու ձգտման առաջացումը:

Նշված պայմանները փոխկապակցված են, և դաստիարակի կողմից դրանց լիարժեք իրականացման դեպքում կստեղծվի զարգացնող միաժամանակ դաստիարակող միջավայր:

Նախադպրոցականի համագործակցային կարողությունների, ինչպես նաև երեխաների միջանձնային հարաբերությունների ձևավորմանն են ուղղված խաղեր, հատուկ մշակված մեթոդիկաներ, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու երեխաների համագործակցության, փոխզիջման հատկությունների աստիճանը, նրանց՝ հասակակիցների հետ համագործակցելու պատրաստակամությունը:

Փորձարարական հետազոտությունից առաջ իրականացվեց երեխաների համախմբմանն ուղղված աշխատանք՝ ավագ խմբում իրականացվող ծրագրային մանկավարժական աշխատանքը համեմվեց հետաքրքիր առաջադրանքներով և խաղային իրադրություններով:

Երեխաների համախմբումը կերպարվեստային գործունեության հիման վրա

ա/ նկարներով կազմել գրքույկ «Գնդիկ բոքոնիկը» հեքիաթի բովանդակությամբ: Յուրաքանչյուր երեխա նկարում է առաջարկված դրվագը, այնուհետև նրանք միացնում են իրար և համատեղ պատրաստում գրքույկը,

բ/ էկոլոգիական դաստիարակության պարապմունքի համար պլաստիլինից ծեփել որևէ միրգ կամ բանջարեղեն և տեղադրել առանձին ափսեների մեջ,

գ/ մարտի 8-ի առթիվ զարդարել պատը գարնանային ծաղիկներով:

Երեխաների համախմբումը խոսքային գործունեության հիման վրա

ա/ նկարներով կազմել որևէ պատմություն՝ ընտրելով և ճիշտ տեղադրելով նկարները երեխաները վերարտադրում են պատմությունը,

բ/ որևէ հեքիաթի օրինակով /«Գառնուկ ախպեր»/ հորինել նոր հեքիաթ, օգնել միմյանց բովանդակությունը կառուցելու համար, այնուհետև պատմել:

Ուշադրության դրսևորում ընկերոջ հանդեպ: Աշխատանքի նպատակն է ձևավորել հասակակցին նկատելու, տեսնելու, ուշադրություն դարձնելու կարողություններ: Տրվում են համապատասխան առաջադրանքներ: Օրինակ՝ խաղալ «Փչացած հեռախոս», «Արձագանք», «Հայելի», «Ընտիր զուգընկերոջդ» խաղերը:

Գործողությունների համաձայնեցում: Այս աշխատանքի խնդիրն է սովորեցնել երեխաներին համաձայնեցնել սեփական վարքագիծը մյուս երեխաների վարքագծին, որի արդյունքում ձևավորվում է հասարակական կողմնորոշում և զգացմունքայնություն: Օրինակ, **«Կառուցում ենք պատկերներ»**

հանձնարարության ժամանակ դաստիարակը, հավաքելով երեխաներին, առաջարկում է պատկերել իրենց ծանոթ որևէ կենդանու, օրինակ՝ փիղ, ուղտ, ձի, ընդ որում, յուրաքանչյուր երեխա պետք է պատկերի տվյալ կենդանու մարմնի որևէ մասը: Երեխաների ցանկությամբ ընտրվում են նրանք, ովքեր ուղտի ոտքերն են, պոչը, գլուխը, վիզը, սապատները: Ստանալով պատկերը՝ երեխաները սկսում են շարժվել սենյակում՝ կոորդինացնելով իրենց շարժումներն այնպես, որ տվյալ կենդանու պատկերը պահպանվի:

Ընդհանուր ապրումներ: Այս աշխատանքն ուղղված է ընդհանուր ապրումների, հույզերի առաջացմանը: **«Մոլորված երեխաները»** խաղում դրսևորվում են երեխաների՝ սկզբում բացասական, այնուհետև՝ դրական հույզերը:

Փոխգնությունը խաղում: «Օգնենք միմյանց» -խաղում դաստիարակը հավաքում է երեխաներին իր շուրջը և ասում. «Այսօր մեզ համար սովորական օր չէ, մենք պետք է աննկատել իրեն օգնենք միմյանց: Ես հիմակվանից ամենաձեզանից յուրաքանչյուրին և ցածրաձայն կասեմ, թե ով ինչպես պետք է օգնի մյուսին: Օրվա վերջին մենք կհավաքվենք և կորոշենք, թե ով ինչպես է օգնել և շնորհակալություն կհայտնենք»:

Բարի ցանկություններ: Կազմակերպվում են խաղեր, որոնք ուղղված են երեխաների խոսքային վերաբերմունքի դրսևորմանը ընկերների հանդեպ: Երեխաները ընդգծում են հասակակիցների արժանիքները և դրական որակները: **Համատեղ գործունեություն**: Կազմակերպվում են խաղ-պարապմունքներ, որոնց ընթացքում նախատեսվում են սոցիալական վարքագծի դրսևորման տարբեր ձևեր: Խաղ-պարապմունքներում առկա են մրցակցային տարրեր:

Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ՝ **«Փորձարարական ուսումնասիրության խնդիրները և կազմակերպման առանձնահատկությունները»** երկրորդ ենթագլխում ներկայացված են փորձարարական հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդներն ու կազմակերպման ձևերը:

Փորձարարական հետազոտության առաջին փուլի նպատակն էր ուսումնասիրել նախադպրոցական տարիքի երեխաների համագործակցային կարողությունների դրսևորման առանձնահատկությունները, հետազոտվող երեխաների համագործակցության ձևերը դաստիարակների, ծնողների և հասակակիցների հետ, գնահատել համագործակցային կարողությունների դրսևորման աստիճանը:

Արձանագրող փորձարարական հետազոտության ընթացքում լուծվել են հետևյալ խնդիրները.

- Բացահայտել երեխաների համագործակցելու պահանջմունքները խաղային գործունեության ընթացքում:
- Դիտարկել պարապմունքների ընթացքում երեխաների համագործակցության զգացողությունն ու ցանկությունը:

- Որոշարկել երեխաների համագործակցային կարողությունների դրսևորումը կերպարվեստային և աշխատանքային գործունեության ընթացքում:
- Բացահայտել ավագ նախադպրոցականի հաղորդակցման դրդապատճառները:
- Բացահայտել և արձանագրել երեխաների համագործակցային կարողությունների խթարման պատճառները:

Համաձայն դիտման արդյունքների, խաղային գործունեության ընթացքում երեխաների պահանջմունքները դրսևորվեցին հետևյալ կերպ՝ կրտսեր նախադպրոցական տարիքում երեխաները խաղում էին կողք-կողքի, կատարում նույնատիպ գործողություններ, չէին խանգարում միմյանց: Միջին նախադպրոցական տարիքում ձևավորվում էին խաղային խմբեր, որոնց գործողությունները նպատակաուղղված էին ընդհանուր գաղափարի շուրջ: Առավել աչքի էին ընկնում և ուղղորդում էին խաղն ակտիվ երեխաները: Շատ երեխաներ /ամաչկոտ, պասիվ/ պարզապես չէին մասնակցում, որոշ երեխաներ փորձում էին նրանց ներառել խաղային գործունեության մեջ: Ավագ նախադպրոցական տարիքում երեխաները, հիմնականում, դրսևորում էին խաղընկերոջ հանդեպ հոգատար վերաբերմունք, հաշվի էին առնում միմյանց հետաքրքրություններն ու ցանկությունները, ձգտում էին համընդհանուր արդյունքի: Սակայն արձանագրվեց, որ հատկապես սյուժետադերային խաղերի ընթացքում երեխաների միջև դերերի բաշխման ժամանակ կոնֆլիկտներ էին առաջանում, և արդյունքում որոշ երեխաներ միայն կարևոր դերեր էին ստանձնում, մյուսները պարզապես լսումու կատարում էին:

Խաղային համատեղ գործունեության ընթացքում երեխաների պահանջմունքների դրսևորման մակարդակները պայմանականորեն որոշվեցին ցածր, միջին և բարձր ցուցանիշներով, որոնք ներկայացված են թիվ 1 աղյուսակում:

Աղյուսակ 1

Խաղային գործունեության ընթացքում երեխաների հաղորդակցման պահանջմունքների դրսևորման մակարդակները

Նախադպրոցական տարիք	Խաղային գործողություններ	Ցուցանիշներ					
		Ցածր		Միջին		Բարձր	
		n	%	n	%	n	%
Կրտսեր նախադպրոցական n=20	Խաղ կողք-կողքի Նույնատիպ գործողություններ Գործողությունները միավորելու փորձ	8	40	7	35	5	25

Միջին նախադպրոցական n=25	Հետաքրքրությունների հաշվառում Խաղային խմբերի ձևավորում Նպատակաուղղված գործողություններ	12	48	7	28	6	24
Ավագ նախադպրոցական n=30	Համատեղ խաղեր Բարոյական վարքագծի դրսևորում	14	47	10	33	6	20

Տարբեր պարապմունքների և աշխատանքային գործունեության ընթացքի դիտարկման արդյունքում բացահայտվեցին ավագ նախադպրոցականների համագործակցման դրդապատճառները: Դրանք, հիմնականում, դրսևորվում էին ընկերոջ հանդեպ հոգատար վերաբերմունքով, նրա ցանկությունների ու հետաքրքրությունների հաշվառմամբ, միմյանց հետ դրական հարաբերությունների հաստատման կարողություններով, ինչպես նաև համատեղ գործունեության արդյունքի գնահատմամբ:

Արձանագրող փուլում արձանագրվեցին նաև ավագ նախադպրոցականների համագործակցային կարողությունների խաթարման պատճառները: Հինգից վեց տարեկանում համագործակցային կարողությունների խաթարման պատճառները, հիմնականում, սոցիալականացման դժվարություններն են, որոնք դրսևորվում են երեխաների ամաչկոտությամբ, նեղացկոտությամբ, սեփական ուժերի հանդեպ անվստահությամբ, ցածր ինքնագնահատականով: Հաղորդակցման դժվարություններ ունեն նաև գերակտիվ, դանդաղկոտ, երեսառած, ցուցադրական վարքագծով, անկարգապահ /մեծահասակներին չենթարկվելու գերակայությամբ/ երեխաները:

Փորձարարական հետազոտության արձանագրող փուլում կատարված աշխատանքները նկարագրված են նաև արձանագրություններում:

Ավագ նախադպրոցականների հաղորդակցման դրդապատճառների դրսևորման մակարդակները պատկերված են թիվ 1 տրամագրում:



Տրամագիր 1. Ավագ նախադպրոցականների հաղորդակցման դրդապատճառների դրսևորման մակարդակները

Երկրորդ գլխի երրորդ՝ «Փորձարարական հետազոտության կազմակերպման մեթոդիկան» ենթագլխում ներկայացված են փորձարարական հետազոտության հիմնական փուլի ընթացքն ու ընդհանրացված արդյունքները:

Մշակվեց դաստիարակների և ծնողների հետ կազմակերպվող տեսական և գործնական աշխատանքների թեմատիկ ծրագիր, որի իրականացման ընթացքում սերտ կապ հաստատվեց դաստիարակի և ծնողների միջև:

Փորձարարական խմբի երեխաների հետ կազմակերպվեցին նախապես ծրագրած հետևյալ աշխատանքները՝ պարապմունքներ, կերպարվեստային գործունեություն, շարժախաղեր, սյուժետադերային խաղեր, հարց ու պատասխան:

Պարապմունքներին ընդգրկվել են թեմաներ՝ նպատակաուղղված երեխաների համագործակցությանը, փոխգործունեությանը, վարքագծային այնպիսի որակների դաստիարակմանը, ինչպիսիք են հանդուրժողականությունը, փոխօգնությունը, փոխզիջումը, ընկերասիրությունը և այլն:

Աղյուսակ 2

Փորձարարական աշխատանքի ընդհանրացված արդյունքները

Փորձարարական հետազոտության	Երեխաների թիվը		Համագործակցային կարողությունների ձևավորման մակարդակները		
	Փ	Ս	Ցածր	Միջին	Բարձր

փուլերը			Փ		Ս		Փ		Ս		Փ		Ս	
			n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Արձանագրող	30	30	14	45	14	45	12	40	12	40	4	15	4	15
Ձևավորող	30	30	4	15	14	45	6	20	12	40	20	65	4	15
Ստուգիչ	30	30	4	15	14	45	6	20	12	40	20	65	4	15



Տրամագիր 2. Փորձարարական աշխատանքի արդյունքները

Տեսական ուսումնասիրությունների, վերլուծությունների, փորձարարական աշխատանքների արդյունքների հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Գիտական աղբյուրների ուսումնասիրությունը, վերլուծությունը և ընդհանրացումը փաստեցին երեխայի սոցիալականացման և հարմարման գործոնները սահմանող գիտական հայեցակարգերի արդիականությունը:
2. Ուսումնասիրվել և դիտարկվել են երեխաների համագործակցության ձևերը միմյանց և դաստիարակների հետ, համագործակցային կարողությունների դրսևորման առանձնահատկությունները մանկապարտեզի տարիքային տարբեր խմբերում /կրտսեր, միջին, ավագ/.

- դաստիարակը, գնահատելով կրտսեր խմբի երեխաների և՛ գործողությունները, և՛ փոխհարաբերությունները,

նպաստում է համագործակցության կարողությունների յուրացմանը:

- միջին խմբում երեխաների փոխհարաբերությունների հիմքում ընկած են բարոյական արժեքներ, որոնք խթանում են փոխներգործությունը և նպաստում գիտակից համագործակցությանը:
- ավագ նախադպրոցական տարիքում համագործակցային հմտություններն ուղղված են փոխներգործության ընթացքում դրական հարաբերություններ հաստատելու կարողության ձևավորմանը:

3. Հետազոտության ընթացքում բացահայտվել են ավագ նախադպրոցականների համագործակցության ձևերը, ինչպես նաև դրանց դրդապատճառները:

4.Մշակվել է նախադպրոցական տարիքի երեխաների համագործակցային կարողությունների ձևավորմանն ուղղված մանկավարժական պայմանների համալիր, որը ներառում է.

- պահանջմունքների բացահայտում,
- համագործակցելու ցանկության իրականացում գործունեության տարբեր ձևերում /խաղային, աշխատանքային, կերպարվեստային պարապմունքներ/,
- համագործակցության դրդապատճառների ձևավորում:

5.Բացահայտվել և ապացուցվել է, որ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների համագործակցային կարողությունների ձևավորման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է հասակակիցների միջավայրում ինքնուրույն սոցիալական փորձի ձեռքբերմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում

1. **Ավագյան Մ.** Նախադպրոցական տարիքի երեխաների համագործակցության ձևերը: «Նախաշավիղ» ամսագիր 5-6, 2006թ., էջ 92-95
2. **Ավագյան Մ.** Նախադպրոցական տարիքի երեխաների համագործակցությունը, գործունեության տարբեր ձևերում: Ժողովածու ՀՊՄՀ-ի հիմնադրման 85-ամյակին, պրոֆ. անձնակազմի ասպ հայցորդների և գիտաշխ 53-րդ գիտաժողովի 1 պրակ, Երևան 2008թ., էջ 74-76
3. **Ավագյան Մ.** Նախադպրոցականի համագործակցային կարողությունների ձևավորման առանձնահատկությունները: /Մեթոդական հանձնարարական/. «Զանգակ-97» հրատ. Երևան 2010թ., 38 էջ
4. **Ավագյան Մ.** Նախադպրոցականի համագործակցային կարողությունների զարգացման առանձնահատկությունները: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես 10-12, 2013թ., էջ 76-78
5. **Авагян М**. "Формы, методы и средства формирования коммуникативной компетенции дошкольников в процессе сотрудничества", Сибак, Личность, семья и общество: Вопросы педагогики и психологии. N°12 /57/, Новосибирск, 2015

6.Նախադպրոցականների համագործակցային կարողությունների ձևավորման մանկավարժա-հոգեբանական պայմանները: «Հայ գիտական հանդես» 4(34), Երևան 2016թ., էջ 136-145

7. Համագործակցային կարողությունների ձևավորման անհրաժեշտությունը նախադպրոցական տարիքում: «Մխիթար Գոշ» գիտական հոդվածների ժողովածու 2(45), 2016թ., էջ 114-117

МАРИАННА САМВЕЛОВНА АВАКЯН
ПЕДАГОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ ФОРМИРОВАНИЯ УМЕНИЙ СОТРУДНИЧЕСТВА У ДОШКОЛЬНИКА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- „Теория и история педагогики”

Защита диссертации состоится 31-ого мая 2017 года в 12:00 на заседании специализированного совета 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу 0010, г. Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования

Значительное ухудшение показателей нравственно-психологического здоровья личности в настоящее время обусловлено нестабильностью естественных институтов социализации (семьи и группы сверстников), доминированием индивидуальных форм воспитания дошкольников. Педагогическая практика последних лет свидетельствует о том, что значительное количество дошкольников затрудняется в общении со сверстниками, не умеет договариваться, не готово к сотрудничеству. Известно, что именно в процессе общения со сверстниками развиваются механизмы межличностного восприятия, которые способствуют формированию социальных чувств и важнейших личностных качеств. Если на ранних стадиях социализации не удовлетворяются социальные потребности, в частности, потребность в общении, закономерно возникают трудности в передаче позитивной ориентации к окружающей среде, а в дальнейшем увеличивается риск межличностных и внутриличностных конфликтов.

Психолого-педагогическому анализу формирования навыков сотрудничества у дошкольников посвящены исследования таких ученых, как А. В. Петровский, В. Н. Мухина, Г. А. Цукерман, М. И. Лисина, Т. Н. Репина и др.. В частности, особо акцентируется роль сверстников в формировании объективной самооценки и способности самоанализа. Отмечаются также важность приобретения собственного социального опыта и возможность самореализации и самоутверждения в группе сверстников. Однако, педагогический процесс в современных ДОУ построен, в основном, на сотрудничестве воспитателя и детей, вопросы организации и координации общения и совместной деятельности детей друг с другом специально не предусмотрены в комплексных программах воспитания. Они решаются спонтанно, по усмотрению воспитателей. Актуальность исследования обусловлена необходимостью разработки методик формирования умений сотрудничества дошкольников в процессе совместной деятельности сверстников, способствующих развитию личности ребенка в целом.

Цель исследования

Выявить педагогические условия формирования умений сотрудничества у дошкольников, направленных на повышение эффективности образовательного процесса.

Задачи исследования

1. Проанализировать теоретические и научно-методические основы формирования навыков сотрудничества у детей дошкольного возраста.

2. Исследовать и диагностировать проявления и степень выраженности навыков сотрудничества у детей разных возрастных групп детского сада.

3. Практическим исследованием уточнить мотивы и формы сотрудничества старших дошкольников.

4. Разработать и экспериментально обосновать комплекс педагогических условий по формированию навыков сотрудничества у детей старшего дошкольного возраста.

5. Путем опытного обучения проверить продуктивность разработанного педагогического комплекса.

Научная новизна

1. Проанализированы и охарактеризованы причины (деятельностные, мотивационные) трудностей сотрудничества старших дошкольников.

2. Разработаны и экспериментально обоснованы педагогические условия формирования умений сотрудничества у старших дошкольников (объединение детей в процессе совместной деятельности, обеспечение развивающей предметной среды, организация целенаправленных занятий и игр).

Теоретическое значение исследования

- Расширились теоретические представления о формировании личности дошкольника на основе выявления функций общения и сотрудничества со сверстниками.
- Психологически проанализированы трудности сотрудничества старших дошкольников, разработаны педагогические пути их преодоления.

Практическая значимость исследования

Комплекс педагогических условий формирования у дошкольников умений сотрудничества может быть успешно применен в педагогическом процессе дошкольных образовательных учреждений.

Структура и объем диссертации

Диссертация состоит из введения, двух глав, заключения, методических рекомендаций, списка литературы /142 наименований/. Объем диссертации составляет 141 компьютерных страниц.

MARIANA SAMVEL AVAGYAN
PEDAGOGICAL PRECONDITIONS FOR THE DEVELOPMENT OF COOPERATION SKILLS AMONG PRESCHOOL CHILDREN

Thesis for degree of a candidate of pedagogical sciences, specialty 13.00.01 – "Theory and History of Pedagogy"

The defense of the thesis will be held on the 31th of May, 2017, at 12:00 p.m. at the session of specialized council of 020 State Commission for Academic Degrees and Titles at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan at 17, Tigran Mets st., 0010, Yerevan.

SUMMARY

The relevance of the research. Currently, the remarkable decrease of a person's moral-psychological health indicators is due to the instability of natural institutes of socialization (family and peer groups), dominated by individual forms of preschool children upbringing. The pedagogical experiences of the preceding years come to prove that even a greater number of preschool children have problems in the communication with their peers; they cannot reach mutual agreement and are not ready to cooperate. It is not a secret that in the process of peer communication certain mechanisms of interpersonal perception are developed, which stimulate the formation of social feelings and vital personal qualities. If, at early socialization stages, the social needs (particularly the need for communication) are not satisfied, there, correspondingly, arise difficulties transferring positive orientation to the immediate environment, and, later, the risk of interpersonal and intrapersonal conflicts increases.

Researches of scholars like A. V. Petrovski, V. N. Mukhin, G. A. Tsukerman, M.I. Lisin, T. H. Repin etc. have been dedicated to the psycho-pedagogical analysis of the development of cooperation skills among preschool children. Particularly, the role of the peers in the formation of the objective self-evaluation and personal self-analysis are specifically highlighted. Also, a special emphasis is put on the importance to obtain personal social experience and on the chance of self-realization and self-affirmation in a peer group. However, the pedagogical process in contemporary preschool educational institutions is mainly based on the cooperation between the educator and the children, and the issues relating the management and coordination of communication and the joint activities of the children are not accentuated in the complex educational programs. They are settled on the spot, at the educator's discretion. The actuality of the research is based on the necessity to elaborate methods to develop cooperation skills among the preschool children in the process of joint peer activities which stimulate the formation of a child's personality on the whole.

The purpose of the research is to reveal the pedagogical conditions of formation of preschooler's cooperative abilities directed to the improvement of educational process.

The objectives of the research.

- To analyze the theoretical and scientific-methodical essentials of the development of cooperation skills among preschool children,
- To study and detect the existence and the degree of intensity of the cooperation skills among different age-group children in kindergartens,
- To experimentally clarify the motives and forms of cooperation among senior preschool children,
- To develop and experimentally ground the complex of pedagogical terms on the development of cooperation skills among senior preschool children,
- To pilot the efficiency of the developed pedagogical complex.

The scientific novelty of the research.

1. The causes of difficulties of senior preschoolers' collaboration have been analyzed and defined (functional and motivational).

2. The pedagogical conditions of the formation of senior preschoolers' collaborative abilities have been designed and justified through experiment (unity of

children through cooperative activity, providing developing objective environment, organizing purposeful lessons and games).

The theoretical relevance of the research.

- The formation of theoretical notions of preschooler has been expanded by releaving the functions of communicating and collaborating with peers.
- The difficulties of cooperation of contemporary senior preschool children have psychologically been analyzed, and the pedagogical ways to overcome them have been developed.

The practical relevance of the research.

The formation of complex of pedagogical conditions of preschoolers' collaborative abilities can be used in pedagogical process successfully.

The structure and the volume of the dissertation.

The dissertation consists of an introduction, two chapters, a conclusion, methodical recommendations and a list of references. The volume of the dissertation is 141 computer pages.